

Կ Ա Ր Գ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՄՈՒՀ) բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտների (այսուհետ՝ հավակնորդ) Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհ) համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու հետ կապված հարաբերությունները:

2. Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է՝

1) մինչև 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը: Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունը,

2) վճարովի հիմունքով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ունեցող հավակնորդի՝ սույն կարգով կրթությունը շարունակելու դեպքի:

3. Հավակնորդի կրթության շարունակման գործընթացն ապահովելու համար բուհի (բուհերի) և ՄՄՈՒՀ-ի միջև կնքվում է համագործակցության համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր) (բացառությամբ ԲՈՒՀ-ի և տվյալ հաստատության միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող համապատասխան ստորաբաժանման), որում ներառվում են նաև այն մասնագիտությունները՝ համապատասխան առարկայական տարբերություններով, որոնցով հնարավոր է շարունակել կրթությունը: Համաձայնագիրն ըստ անհրաժեշտության կարող է վերանայվել:

4. Հավակնորդը բուհի և ՄՄՈՒՀ-ի միջև համագործակցության համաձայնագրի բացակայության դեպքում կրթությունը կարող է շարունակել իր նախընտրած բուհում՝ պահպանելով սույն կարգի 2-րդ, 13-րդ և 16-րդ կետերի պահանջները:

5. Պետական կամ ոչ պետական հավատագրմագրված բուհում կարող են սույն կարգով ուսումը շարունակել միայն պետական կամ ոչ պետական հավատարմագրված ՄՄՈՒՀ-ների հավակնորդները:

II. ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

6. Բուհը յուրաքանչյուր տարի, մինչև ապրիլի 15-ը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն գրավոր ներկայացնում է բուհում հավակնորդների կրթության շարունակման համապատասխան տեղերի թիվը, որը չպետք է գերազանցի տվյալ մասնագիտությամբ նախատեսված և տվյալ ուսումնական տարվա համար հատկացված ընդունելության տեղերի 20 տոկոսը՝ հաշվի առնելով նաև Բարձրագույն ուսումնական հաստատության տվյալ մասնագիտության գծով Հայաստանի Հանրապետության կառավարություն 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված կարգով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից լիցենզիայով տրված սահմանային տեղերի թիվը:

7. ՄՄՈՒՀ-ը յուրաքանչյուր տարի, մինչև ապրիլի 1-ը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն գրավոր ներկայացնում է այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում:

8. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը բուհերի և ՄՄՈՒՀ-ների կողմից ներկայացված հայտերի հիման վրա մինչև տվյալ տարվա մայիսի 10-ը հաստատում է համապատասխան բուհում կրթությունը շարունակելու համար հատկացված

տեղերի թիվը՝ ըստ հաստատությունների և մասնագիտությունների, ինչպես նաև ՄՄՈՒՀ-ներում ուսուցանվող այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում:

9. ՄՄՈՒՀ-ը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ցանկի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակում է ՄՄՈՒՀ-ից համապատասխան բուհերում կրթությունը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների և առարկայական տարբերությունների:

10. Հավակնորդը բուհ տեղափոխվելու մասին դիմումը ՄՄՈՒՀ-ի ղեկավարին է ներկայացնում պետական ամփոփիչ ստուգման քննաշրջանից առնվազն 10 օր առաջ՝ նշելով նախընտրած բուհը և նախընտրելի մինչև 2 մասնագիտություն՝ առաջին հայտի գերակայության սկզբունքով:

11. Հավակնորդների դիմումների հիման վրա ՄՄՈՒՀ-ը հրավիրում է համապատասխան բուհից ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի N 638-Ն հրամանով ձևավորվող պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով: Ներկայացուցչի չմասնակցելու դեպքում բուհը պաշտոնապես տեղեկացնում է ՄՄՈՒՀ-ին: Պետական որակավորող հանձնաժողովի կազմում բուհի ներկայացուցչի բացակայությունը հիմք չէ հավակնորդների՝ տվյալ բուհում սույն կարգով կրթությունը շարունակելու մերժման համար:

12. ՄՄՈՒՀ-ի պետական որակավորող հանձնաժողովը պետական ամփոփիչ ստուգման արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն և հրապարակում սույն կարգով կրթությունը բուհում շարունակող հավակնորդների ցանկը:

13. Հավակնորդը կամ ՄՄՈՒՀ-Ը փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան բուհ մինչև տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

14. Փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

1) դիմում՝ ուղղված ռեկտորին.

2) ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի պատճենը.

3) արձանագրության պատճենը.

4) չորս լուսանկար (3x4 չափսի).

5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ ծննդյան վկայական մինչև 16 տարեկան հավակնորդի համար, կամ զինվորական գրքույկ,

կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական)։

6) զինվորական գրքույկ կամ կցագրման վկայականի պատճենը (զորակոչային տարիքի հավակնորդից փաստաթուղթն ընդունվում է, եթե առկա է տարկետման իրավունք տվող, կամ չզորակոչվելու պատճառ հանդիսացող նշումը, իսկ առողջության պատճառով տարկետում ստացած անձանցից՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումը)։

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում)։

15. Դիմումները քննարկելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)։

16. Եթե բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխվող հավակնորդների թիվը գերազանցում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված տեղերի թիվը, ապա հանձնաժողովը հավակնորդների ընտրությունն իրականացնում է մրցութային հիմունքով՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

- 1) գերազանցության ավարտական փաստաթուղթ (գերազանցության դիպլոմ)։
- 2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ներդիրում առավել բարձր միավորների հանրագումար։
- 3) պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ։

17. Մրցույթն անցկացվում է մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 15-ը։

18. Բուհի ռեկտորը հանձնաժողովի մրցութի արդյունքների հիման վրա մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 20-ը տալիս է մրցութով անցած ուսանողի ընդունման (կցագրման) հրաման, որին կցվում են առարկայական տարբերությունների ցանկը և դրանց հանձնման անհատական ժամանակացույցը։ Առարկայական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը երեք ամիս է։ Մրցութով անցած ուսանողները բուհ են ներկայացնում ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի բնօրինակը։

19. Առարկայական տարբերությունները դրական հանձնելու դեպքում բուհի ռեկտորը երեք աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է ուսանողին, որից հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն է ներկայացնում հաշվետվություն՝ համաձայն սույն կարգի ձևի։

Ց Ա Ն Կ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

| N | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ |
|-----|--|
| 1. | Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ |
| 2. | Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ |
| 3. | Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ |
| 4. | Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ |
| 5. | Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության, հայ-հունական պետական քոլեջ |
| 6. | Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ |
| 7. | Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ |
| 8. | Երևանի պետական հումանիտար քոլեջ |
| 9. | Երևանի Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ |
| 10. | Երևանի Ա.Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ |
| 11. | Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ |
| 12. | «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր |
| 13. | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 14. | «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) և Գյումրու մասնաճյուղի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 15. | «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի 1) Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ, 2) Գյումրու մասնաճյուղի (միջին մասնագիտական կրթական ծրագիր), 3) Շիրակի մասնաճյուղի (միջին մասնագիտական կրթական ծրագիր), 4) Սիսիանի մասնաճյուղի (միջին մասնագիտական կրթական ծրագիր), |
| 16. | «Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան» հիմնադրամի քոլեջ (դեպարտամենտ) |
| 17. | Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 18. | Գյումրու պետական տեխնիկական քոլեջ |
| 19. | «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 20. | Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ |
| 21. | Արթիկի պետական քոլեջ |
| 22. | Վանաձորի Ս.Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ |
| 23. | Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ |

| | |
|-----|---|
| 24. | Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ |
| 25. | «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 26. | Ալավերդու պետական քոլեջ |
| 27. | Սպիտակի պետական քոլեջ |
| 28. | Գավառի պետական երաժշտական քոլեջ |
| 29. | Սևանի բազմագործառույթային պետական քոլեջ (Սևանի պետական քոլեջ) |
| 30. | Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 31. | Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ |
| 32. | Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 33. | Կապանի արվեստի պետական քոլեջ |
| 34. | Սիսիանի պետական քոլեջ |
| 35. | Գորիսի պետական քոլեջ |
| 36. | Մեղրու պետական քոլեջ |
| 37. | Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 38. | Դիլիջանի պետական քոլեջ |
| 39. | Դիլիջանի արվեստի պետական քոլեջ |
| 40. | Բերդի բազմագործառույթային պետական քոլեջ (Բերդի պետական քոլեջ) |
| 41. | Նոյեմբերյանի պետական քոլեջ |
| 42. | Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ |
| 43. | Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 44. | Արմավիրի արվեստի պետական քոլեջ |
| 45. | Էջմիածնի Վ.Համազասպյանի անվան պետական քոլեջ |
| 46. | Աբովյանի բազմագործառույթային պետական քոլեջ (Աբովյանի պետական քոլեջ) |
| 47. | Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 48. | Չարենցավանի պետական քոլեջ |
| 49. | Արարատի պետական քոլեջ |
| 50. | Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 51. | Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 52. | Երևանի պարարվեստի պետական քոլեջ |
| 53. | Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ (Երևանի էստրադային և ջազային պետական քոլեջ և Երևանի մշակույթի պետական քոլեջ) |
| 54. | Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ |
| 55. | Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ |
| 56. | «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամ |
| 57. | «Հայաստանում Ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ |
| 58. | Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 59. | Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 60. | Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 61. | Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 62. | Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 63. | Նոր Գեղի պետական գյուղատնտեսական քոլեջ |
| 64. | Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ |
| 65. | «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ |

| | |
|-----|---|
| 66. | Երևանի Հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ |
| 67. | Գյումրու պետական բժշկական քոլեջ |
| 68. | Դիլիջանի պետական բժշկական քոլեջ |
| 69. | Վանաձորի պետական բժշկական քոլեջ |
| 70. | Մարտունու պետական բժշկական քոլեջ |
| 71. | Գավառի պետական բժշկական քոլեջ |
| 72. | Արմավիրի պետական բժշկական քոլեջ |
| 73. | Արարատի պետական բժշկական քոլեջ |
| 74. | Կապանի պետական բժշկական քոլեջ |
| 75. | Ավիաուսումնական կենտրոն |
| 76. | Երևանի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ (Հավատարմագրված մասնագիտություններով) |
| 77. | Պրովիգոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ (Հավատարմագրված մասնագիտություններով) |
| 78. | «Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջ» կրթահամալիր |
| 79. | Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (միջին մասնագիտական կրթական ծրագիր) |
| 80. | Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ |
| 81. | «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ |
| 82. | Արթիկի հատուկ բժշկական քոլեջ |

ՑԱՆԿ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ
 ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԿՐԹՈՒԹՅԱՆ
 ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

| N | ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՈՒՆՆԵՐ |
|-----|---|
| 1. | Իրավագիտություն |
| 2. | Սոցիալական ապահովության կազմակերպում |
| 3. | Սոցիալական աշխատանք |
| 4. | Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ Թարգմանություն և գործավարություն |
| 5. | Թարգմանություն և մաքսավարություն |
| 6. | Արխիվավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ Թարգմանություն և արխիվավարություն |
| 7. | Զբոսաշջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ |
| 8. | Թարգմանություն և սպասարկման կազմակերպում |
| 9. | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ |
| 10. | Նախադպրոցական կրթություն |
| 11. | Պարի ուսուցում |
| 12. | Մանկաբարձական գործ |
| 13. | Դեղագործություն |
| 14. | Քույրական գործ |
| 15. | Լաբորատոր ախտորոշում |
| 16. | Բուժական մերսում |
| 17. | Բուժական գործ |
| 18. | Բուժական կոսմետոլոգիա |
| 19. | Քույրական գործի կազմակերպում |
| 20. | Ատամնատեխնիկական գործ |
| 21. | Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների) |
| 22. | Երգեցողություն |
| 23. | Երգչախմբավարություն |
| 24. | Երաժշտության տեսություն |
| 25. | Էստրադայի երաժշտարվեստ |
| 26. | Պարարվեստ |
| 27. | Դերասանական արվեստ |
| 28. | Ռեժիսուրա (ըստ տեսակների) |
| 29. | Գեղանկարչություն |
| 30. | Քանդակագործություն |
| 31. | Դիզայն (ըստ ճյուղերի) |
| 32. | Զարդային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ |
| 33. | Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում |

| | |
|-----|---|
| 34. | Գրադարանային գործ |
| 35. | Սոցիալ-մշակութային և ժողովրդական գեղարվեստական գործունեություն ստեղծագործություն |
| 36. | Հաշվապահական հաշվառում «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» / (ըստ ճյուղերի) |
| 37. | Մենեջմենթ /կառավարում/ (ըստ ճյուղերի) |
| 38. | Ֆինանսներ (ըստ ճյուղերի) |
| 39. | Բանկային գործ |
| 40. | Ապահովագրական գործ (ըստ ճյուղերի) |
| 41. | Շուկայաբանություն (ըստ ճյուղերի) |
| 42. | Առևտուր (ըստ ճյուղերի) |
| 43. | Ապրանքագիտություն |
| 44. | Բաց լեռնային աշխատանքներ |
| 45. | Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր |
| 46. | Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում |
| 47. | Էլեկտրամատակարարում (ըստ ճյուղերի) |
| 48. | Ջերմաէլեկտրակայաններ |
| 49. | Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ |
| 50. | Սև և գունավոր մետաղների ձուլման արտադրություն |
| 51. | Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում |
| 52. | Վերամբարձ տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում |
| 53. | Բժշկական տեխնիկայի տեղակայում, տեխնիկական սպասարկում և նորոգում |
| 54. | Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում |
| 55. | Էլեկտրական մեքենաներ և ապարատներ |
| 56. | Լուսանկարչական գործ |
| 57. | Տրանսպորտային էլեկտրասարքավորումների և ավտոմատիկայի շահագործում (ըստ տրանսպորտի տեսակների) |
| 58. | Կապի ցանցեր և հաղորդակցման /կոմուտացիոն/ համակարգեր |
| 59. | Ռադիոկապ, ռադիոհաղորդում և հեռուստատեսություն |
| 60. | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի) |
| 61. | Փոստային կապ |
| 62. | Կինոսարքավորումների և տեսատեխնիկայի շահագործում |
| 63. | Ավտոմատիկան, հեռուստամեխանիկան և կապը տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) |
| 64. | Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր |
| 65. | Համակարգչային գեղարվեստական նախագծում |
| 66. | Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում |
| 67. | Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում |
| 68. | Մեխատրոնիկա |
| 69. | Սպասարկման կազմակերպում |
| 70. | Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում |
| 71. | Զբոսաշրջություն |
| 72. | Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ |
| 73. | Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ |

| | |
|------|---|
| | տրանսպորտի տեսակների) |
| 74. | Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում |
| 75. | Կենսաքիմիական արտադրություն |
| 76. | Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա |
| 77. | Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն |
| 78. | Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա |
| 79. | Մսի և մսամթերքների տեխնոլոգիա |
| 80. | Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա |
| 81. | Անասնաբուծություն |
| 82. | Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա |
| 83. | Հագուստի մոդելավորում և նախագծում |
| 84. | Հագուստի պատրաստման տեխնոլոգիա |
| 85. | Պոլիգրաֆիական արտադրություն |
| 86. | Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն |
| 87. | Ճարտարապետություն |
| 88. | Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում |
| 89. | Երկաթուղիների շինարարություն, երկաթգիծ և գծային տնտեսություն |
| 90. | Երկաթուղու շարժակազմի տեխնիկական շահագործում |
| 91. | Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում |
| 92. | Արդյունաբերական և քաղաքացիական շենքերի էլեկտրական սարքավորումների տեղակայում, կարգավորում և շահագործում |
| 93. | Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում |
| 94. | Քաղաքացիական կադաստր |
| 95. | Հողաշինարարություն |
| 96. | Գյուղատնտեսագիտություն |
| 97. | Գյուղատնտեսության մեքենայացում |
| 98. | Ձկնաբանություն և ձկնաբուծություն |
| 99. | Ջերմատնային տնտեսություն |
| 100. | Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում |
| 101. | Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում ու նորոգում |
| 102. | Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում |
| 103. | Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանություն |
| 104. | Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում) (ըստ ճյուղերի) |
| 105. | Հրշեջ փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում |
| 106. | Կառավարում արտակարգ իրավիճակներում |
| 107. | Հրդեհային պաշտպանություն |
| 108. | Ներքին ջեռուցման և օդափոխման համակարգերի սանիտարական սարքավորումների մոնտաժում և շահագործում |
| 109. | Մեղվաբուծություն |
| 110. | Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա |
| 111. | Հողային ռեսուրսների կառավարում |
| 112. | Թռչող ապարատների և շարժիչների տեխնիկական շահագործում |